



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

Երևան, Բաղրամյան 19, 333 սենյակ, հեռախոս (10) 51-33-58

«21-ե հունվարի 2013թ.

N 030-Ե-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրություն 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգե ՀՀ օրենքի 47-րդ և 50-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ են ներկայացնում «Շրջանառության հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը, նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության և գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքները:

Խնդրում են ներկայացված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Է. ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՇՐՋԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շրջանառության հարկի մասին Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236 օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները» բառերը փոխարինել «այն հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները, որոնց կողմից մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը նախորդ օրացուցային տարվա ընթացքում գերազանցել է 58,35 մլն դրամը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Շրջանառության հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է տարեկան մինչև 58,35 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները շրջանառության հարկով հարկման դաշտ բերելու անհրաժեշտությամբ:

1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները շրջանառության հարկով հարման սուբյեկտ չեն, այնինչ այդ կազմակերպություններն իրենց ծառայությունները, որպես կանոն, մատուցում են գրավոր կնքված պայմանագրերի հիման վրա, և այստեղ հարկային չարաշահումների հնարավորությունն աննշան է, իսկ եթե այդպիսիք կան, ապա հարկման դաշտը փոխելիս դրանք չեն վերանում: Հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունն առանց դժվարության կարող է մատուցել նաև տնտեսագիտական ծառայություն, հարկային խորհրդատվություն, ֆինանսական ծառայություն կամ խորհրդատվություն, ընդհուպ մինչև խմբագրական ծառայություն, գործավարություն և այլն: Կարող է լինել իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն և միաժամանակ մի քանի պայմանագրերով մատուցել նաև հաշվապահական ծառայություններ: Դիզայներական ընկերությունը կարող է, օրինակ, մեկ ամիս հաշվապահական խորհրդատվություն մատուցել մեկ այլ դիզայներական ընկերության, ուրեմն այդ մի պայմանագրի պատճառով պետք է նրա ողջ գործունեության հարկման դաշտը փոխվի: Օրինակ, Վանաձոր քաղաքում գործող հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունը, որտեղ մի քանի հաշվապահներ են աշխատում, հաշվապահական ծառայություններն է մատուցում տասնյակ այլ ընկերությունների, և որպես փոքր բիզնես, նրա կողմից մատուցված ծառայությունները չեն կարող համեմատելի լինել շրջանառության հարկի մասին օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված մյուս բացառությունների, մասնավորապես, բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, ներդրումային ֆոնդերի, ֆոնդերի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողների, աուդիտորական ընկերությունների ստացած շահույթի ծավալների և բնույթի հետ: Նմանատիպ հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերություններին դուրս թողնելով շրջանառության հարկի մասին օրենքի կիրառության դաշտից՝ հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեությունը խթանելու փոխարեն խոչընդոտներ են ստեղծվում նշված գործունեությամբ զբաղվող ընկերությունների զարգացման առումով, ինչը բնավ

չի բխում Կառավարության 2012-2017 թվականների ծրագրով հռչակված ՓՄՁ-ներին աջակցելու սկզբունքից:

Այս մասով հասկանալի կլիներ, եթե ծառայության, գործարքի տեսակը հարկվեր այս կամ այն հարկատեսակով, ոչ թե «հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունները»:

Հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունները այնպիսի գործունեությամբ են զբաղվում, որ գրեթե ԱԱՀ-ի հաշվանցումներ չեն ունենում (կոմունալ և կապի հաշիվները ինքնարժեքի մեջ չնչին են), ինչը նույնպես խոսում է այն մասին, որ նշված ընկերություններին պետք է շրջանառության հարկով հարկվելու հնարավորություն տրվի:

1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Սույն նախագծով առաջարկվում է տարեկան մինչև 58,35 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները ներառել շրջանառության հարկով հարկվող հարկման դաշտում:

2. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան են շրջանառության հարկ վճարող սուբյեկտների շրջանակի սահմանման հետ կապված իրավահարաբերությունները:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման դեպքում տարեկան մինչև 58,35 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները կընդգրկվեն շրջանառության հարկով հարկվող սուբյեկտների շարքում:

«Շրջանառության հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

**ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության
բացակայության մասին**

«Շրջանառության հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 4.

Շրջանառության հարկ վճարողները

1. Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող են համարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք):

2. Շրջանառության հարկ վճարողներ են համարվում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառություն), չի գերազանցել 58,35 մլն դրամը: Սույն դրույթի կիրառման առումով իրացման շրջանառությունը ներառում է նաև հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), իսկ առևտրային կազմակերպության վերակազմակերպման (միացում, միաձուլում, առանձնացում, բաժանում, վերակազմավորում) դեպքում գործող կազմակերպության (կազմակերպությունների) իրացման շրջանառության հաշվարկման համար հիմք են ընդունվում վերակազմակերպմանը մասնակցող բոլոր կազմակերպությունների նախորդ օրացուցային տարվա իրացման շրջանառությունները:

3. Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

1) «Հաստատագրված վճարների մասին» և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճար վճարող անձինք՝ գործունեության այդ տեսակների մասով.

2) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները և (կամ) ներմուծողները.

3) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները, աուդիտորական ընկերությունները, հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները.

4) առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե՝

ա. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին,

բ. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը),

գ. առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը).

5) երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով վերադաս հարկային մարմնի սահմանած կարգով բացառապես վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված անձինք, եթե նրանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58,35 մլն դրամը.

6) համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող անձինք:

4. Հարկ վճարողները համարվում են շրջանառության հարկ վճարող գործունեության բոլոր տեսակների մասով, բացառությամբ այն տեսակների, որոնք հարկվում են հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով:

5. Սույն օրենքի իմաստով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպություններ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները: